

## 2005 թվականի արտակարգ դեպքերի վերլուծություն

### Տարերային արտակարգ իրավիճակներ

Գրանցվել է 251 դեպք. զոհվել է 3, տուժել՝ 2 մարդ:

2004 թ. համեմատությամբ տարերային արտակարգ իրավիճակի դեպքերը նվազել են 12-ով:

Աճ է գրանցվել ջրհեղեղների, կարկտահարության, ձնաբքերի թվում: Վաղ վեգետացիոն շրջանում ցրտահարության դեպքեր չեն գրանցվել:

### Ջրհեղեղներ

Գրանցվել է ջրհեղեղների առաջացման 31 դեպք: Անցած տարի դրանց պատճառը գետերի վարարումներն էին (14 դեպքում), առատ տեղումները (9 դեպքում), 7 դեպքում՝ հիդրոտեխնիկական կառույցներում վթարները եւ 1-ում՝ ձնհալը:

Ջրհեղեղներով հատկապես աչքի ընկավ ապրիլ ամսվա վերջին տասնօրյակը. ջրհեղեղներ առաջացան Շիրակի (6 դեպք), Վայոց ձորի (4 դեպք), Գեղարքունիքի (3 դեպք), Արագածոտնի (3 դեպք), Արմավիրի (1 դեպք) մարզերում: Ողողվեցին ցանքատարածքներ, փլուզվեցին գյուղամիջյան կամուրջներ եւ ճանապարհներ:

### Երկրաշարժեր

Տարածաշրջանում գրանցվել է 133 երկրաշարժ, որոնց ուժգնությունը հիմնականում կազմել է 1-3 բալ:

Երկրաշարժերի հետեւանքով 2005 թ. հանրապետության տարածքում զոհեր եւ վիրավորներ չեն գրանցվել:

Մարտի 13-ին Գեղարքունիքի մարզի Սոթք, Տրետոք, Ազատ, Նորաբակ գյուղական համայնքներում, իսկ հուլիսի 12-ին Արարատի մարզի Շաղափ գյուղական համայնտ մի աղճճ կառավարությունում ետ, միՓլվածքներ գրանցվել է հողաշերտի, լեռնային ապարների փլվածքների 3 դեպք. զոհվել է 2 մարդ:

Ապրիլի 18-ին Կոտայքի մարզի Մեղրաձոր բնակավայրի մոտակայքում գտնվող ոսկու հանքերում փլուզվել է 1650 մ խորության վրա գտնվող հողաշերտը, ինչի հետեւանքով զոհվել է 2 մարդ:

Մայիսի 17-ին Վայոց ձորի մարզի Շատին եւ Յերմոն գյուղերը կապող ավտոճանապարհին փլուզվել է 40 մ բարձրությամբ եւ 30 մ երկարությամբ ճամփեզրը:

Հունիսի 7-ին Լոռու մարզի Դարպաս գյուղում հորդառատ անձրեւներից փլուզվել եւ քշվել է գյուղամիջյան ժանապարհը:

### Սողանքներ

Գրանցվել է սողանքի 2 դեպք:

Փետրվարի 1-ին Լոռու մարզի Ալավերդի քաղաքի մոտակայքում՝ Սանահին կայարանում սողանքի հետեւանքով փակվեց հարակից ավտոճանապարհի երթեւեկության մի մասը:

Մայիսի 27-ին Տավուշի մարզի Հաղարծին գյուղում բնահողի սողքի հետեւանքով առաջացավ շինությունների փլուզման վտանգ եւ 23 տան բնակիչ տարահանվեց:

Ուժեղ քամիներ

Գրանցվել է ուժեղ քամիների, փոթորիկների, պտտահողմների 19 դեպք. տուժել է 2 մարդ:

Մարտի 20-ին Լոռու մարզում՝ Ստեփանավանում վնասվել եւ քշվել են տանիքներ, կոտրվել բնակարանների ապակիներ, ջարդվել ծառեր, իսկ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում, Վանատուր փ. թիվ 241 տան տանիքն ամբողջությամբ քշվել է, վնասվել են էլ.հաղորդալարեր:

Մարտի 29-ին եւ 30-ին Գորիսում ուժեղ քամին վնասեց թիվ 2 միջնակարգ դպրոցի, 2 մանկապարտեզի, երաժշտական դպրոցի եւ Օրբելյան փ. թիվ 35 տան տանիքները, շրջվեց 12 էլ.սյուն, ինչի հետեւանքով հոսանքազրկվեց 7 գյուղ:

Մայիսի 9-ին Շիրակի մարզի Բանդիվան համայնքում քամուց քշվել են 40 սեփական տան տանիքներ, իսկ մայիսի 12-ին՝ Սիգավետ համայնքում վնասվել է մոտ 30 տան տանիք:

Հունիսի 26-ին Արտաշատում ուժեղ քամին վնասեց բազմաթիվ շինությունների տանիքներ:

Օգոստոսի 21-ին Շիրակի մարզի Սարալանջ եւ Հառիճ գյուղերում վնասվեցին բազմաթիվ շինությունների տանիքներ, Արագածոտնի մարզի մի շարք համայնքներում քշվեցին սեփական տների տանիքներ ու կոտրվեցին ապակիներ, իսկ Ապարան, Թալին քաղաքներում եւ 23 գյուղում ուժեղ քամին շրջեց էլ.սնուցման հենասյուներ, ինչի հետեւանքով վերջիններս հոսանքազրկվեցին, Կոտայքի մարզի Եղվարդ քաղաքում, Նոր Երզնկա գյուղում վնասվեցին շենքերի եւ շինությունների տանիքներ:

Սեպտեմբերի 2-ին Արագածոտնի մարզի Նորաշեն, Գեղադիր, Հնաբերդ, Ամրե Թազա, Ծաղկահովիտ գյուղական համայնքներում պտտահողմը վնասեց բազմաթիվ շինությունների տանիքներ, տուժեց 1 մարդ:

Հոկտեմբերի 17-ին Գեղարքունիքի մարզի Լճափ գյուղում ուժեղ քամու հետեւանքով քշվեց 20 տան տանիք, իսկ Վայոց ձորի մարզի Հորբատեղ, Չիվա, Խաչիկ, Հերմոն գյուղերում վնասվեցին մի շարք սեփական տների տանիքներ, կոտրվեցին ապակիներ:

Տեղատարափ անձրեւ

Գրանցվել է հորդառատ անձրեւի 5 դեպք:

Մայիսի 8-ին եւ 19-ին մայրաքաղաքում առաջացած հեղեղներից խափանվեց մի շարք փողոցների երթեւեկությունը, գրանցվեցին նկուղային հարկերի ողողման դեպքեր:

Օգոստոսի 9-ին Վայոց ձորի մարզի Խնձորուտ գյուղում տեղատարափ անձրեւը վնասեց գյուղի հացահատիկի ցանքատարածքները:

Սեպտեմբերի 6-ին Սյունիքի մարզում հորդառատ անձրեւներից առաջացած ջրահոսքը խճաքարերով լցրեց Կապան-Ներքին Խոտանան համայնքները կապող ավտոճանապարհը՝ խափանելով երթեւեկությունը:

Ձնաբուք եւ ձնահյուս

Գրանցվել է ձնաբքի, ձնահողմի 12 դեպք: Մասնավորապես աչքի ընկավ մարտ ամիսը՝ 10 դեպք: Ձնաբուք գրանցվեց անգամ ապրիլ ամսի 3-ին, երբ Շիրակի մարզի Գյումրի-Աշոցք ավտոճանապարհին ձնաբքի հետեւանքով արգելափակվեց տրանսպորտային 35 միջոց:

Ընդհանուր առմամբ ձնաբքերի հետեւանքով հանրապետության ավտոճանապարհներին գրանցվեց տրանսպորտային միջոցների արգելափակման 5 դեպք:

Դեկտեմբերի 25-ին որսորդության նպատակով 5 հոգի դուրս են եկել Վանաձորից եւ սարերով հասել Կոտայքի մարզ: Մայմեխ սարից հարավ գտնվող ձորում անսպասելի ձնահյուսի հետեւանքով նրանցից երկուսը՝ 1970 թ. ծնված Արտակ Աթոյանը եւ 1966 թ. ծնված Աշոտ Հովհաննիսյանը մնացել են ձյան տակ:

Իրականացվել են որոնողական աշխատանքներ, բայց ապարդյուն:

#### Կարկուտ

Գրանցվել է կարկուտի 43 դեպք: Աչքի ընկան մայիս, հունիս եւ հուլիս ամիսները, որոնց ընթացքում գրանցվեց համապատասխանաբար 10, 13 եւ 14 կարկտահարում: Կարկտահարման 5 դեպք գրանցվեց օգոստոսին եւ մեկ դեպք՝ սեպտեմբերին: Կարկուտ տեղաց բոլոր մարզերում՝ զգալի վնաս հասցնելով գյուղատնտեսությանը:

#### Կայծակնահարում

Գրանցվել է կայծակնահարման 1 դեպք, ինչի հետեւանքով զոհվել է 1 մարդ (մեկ մարդ զոհվել է կայծակնահարումից 2003 թ., 3-ը՝ տուժել 2004 թ.):

Մայիսի 24-ին Շիրակի մարզի Գտաշեն գյուղին հարակից արոտավայրերում կայծակնահարվել է եւ զոհվել է մեկ մարդ:

Տեխնածին արտակարգ

իրավիճակներ

Գրանցվել է 2978 դեպք. զոհվել է 343, տուժել՝ 1848 մարդ:

Տեխնածին արտակարգ իրավիճակների գերակշիռ մասը՝ 97,6 տոկոսը, բաժին է ընկել հրդեհներին եւ ճանապարհատրանսպորտային պատահարներին:

Նախորդ տարվա համեմատ տեխնածին արտակարգ իրավիճակի դեպքերն աճել են 78-ով: Աճ է գրանցվել փլուզումների (37 դեպքով, մոտ 2,8 անգամ) եւ ճՏՊ-ների (148 դեպքով) թվաքանակում: 93-ով նվազել է հրդեհների, 14-ով՝ պայթյունների թիվը:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, 2003-2005 թթ. երրորդ եռամսյակներում գրանցվել է հրդեհների եւ ճանապարհատրանսպորտային պատահարների կայուն աճ, իսկ պայթյունների եւ փլուզումների թիվն ունեցել է նվազման միտում առաջին եւ երկրորդ եռամսյակների նկատմամբ:

#### Հրդեհներ

Արձանագրվել է 1124 հրդեհ. զոհվել է 26 մարդ, եւս 33-ը՝ ստացել վնասվածքներ: Նյութական վնասի չափը կազմել է շուրջ 235 միլիոն դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1271 հրդեհ, զոհվել է 16 եւ վիրավորվել 35 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է մոտ 319 միլիոն դրամ:

Հրդեհների հետեւանքով ոչնչացել են՝ 25 շինություն, 15 միավոր ավտոտրանսպորտ եւ այլ տեխնիկա, 1455 տոննա հացահատիկ եւ անասնակեր: Արձանագրվել է խոշոր հրդեհի 22 դեպք (նախորդ տարի՝ նույնքան):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 398 դեպք (35,4 տոկոս), էլեկտրական սարքավորումների տեղակայման եւ շահագործման կանոնների խախտումը՝ 313 դեպք (27,8 տոկոս), երեխաների խաղալը կրակի հետ՝ 157 դեպք (14 տոկոս), վառարանների տեղակայման եւ շահագործման կանոնների խախտումը՝ 99 դեպք (8,8 տոկոս), հրկիզումները՝ 23 դեպք (2 տոկոս) եւ այլն: Բոլոր հրդեհների առաջացման պատճառները պարզաբանված են: Հրդեհների գերակշիռ մասը, շուրջ 57,1 տոկոսը, շարունակում է տեղի ունենալ բնակելի հատվածում: